

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի շնորհավորանքի խոսքը Թանգարանների միջազգային օրվա առթիվ

Թանգարանների հարգարժան աշխատակիցներ

Մեծ է թանգարանների դերը պատմամշակութային, ազգագրական, հայրենագիտական և այլ արժեքների պահպանման ու հանրահռչակման գործում: Դրանց միջոցով և ձեր մասնագիտական կարողությունների շնորհիվ մենք աշխարհին ներկայանում ենք պատմական հարուստ իրադարձություններով, արհեստներով ու արվեստներով, հոգևոր գանձերով, ուրույն ու ինքնատիպ մշակույթով, մեր բնաշխարհին յուրահատուկ կենդանական ու բուսական աշխարհի ցուցադրությամբ: Մեր թանգարանները միաժամանակ զբոսաշրջությունը զարգացնելու կարևոր կառույցներ են:

Շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի առթիվ, մաղթում աշխատանքային ու անձնական հաջողություններ:

Լավագույն ցանկություններով՝

Գեղարքունիքի մարզպետ

Գնել Սանոսյան